

8. — Վանականին ոգեակը (perispit) (544). — Ս. Յարութեան գմբէթին տակ, Ս. Գերեզմանին առջեւ ծնրագրած էր զառամեալ և սպիտակափառ մագերով ծերունի մը, որ հրեշտակային ջերմեռանդութեամբ կը հաղորդուէր Պետրոս Պատրիարքէն (524-552) . . . վանական Ս. Գէորգն էր ան, Սինայի հրաշագործը: Հարիւր տարիներ խորշմեցուցած էին անոր ճակատը: Պատրիարքը՝ յուզուած ծերունիին պատկառանքէն և սրտառուչ բարեպաշտութենէն՝ իր սենեկապետին միջոցաւ եպիսկոպոսական ճաշի կը հրաւիրէ պատարագէն յետոյ, բայց ծերունին փոխանակ ընդունելու այդ հրաւէրը, մըմնջելով կ'ըսէ, «կամք Տեառնեղիցին»: ու կը խոնարհի և աներևոյթ կ'ըլլայ:

Յետոյ տեղեկութիւն կ'առնուի թէ ծերունի վանականը երբեք չէ թողած Սինայ լեռան իր խցիկը: Հնդկաց իմաստուններուն ծանօթ կրկնաւորութեան (dédoublement) երեւոյթներուն միովը զոր եւրոպական գիտութիւնը՝ հակառակ իրեն սկսած է ճանչնալ, իր ուրուականը, իր կրկնուածը, իր ոգեակը, իր աստղային մարմինը, մինչ իր նիւթական մարմինը իր նիւթական խցիկին մէջ կը հանգչէր. — իր փափաքին ներքին զօրութեամբ և իր կամքին գերմարդկային ոյժովը կը փոխադրուէր Ս. Գերեզմանին տաճարին մէջ եւ կը հաղորդուէր գորովագութ պատրիարքէն: «Գնա՛, կ'ըսէր պատուիրակին՝ որ լեռան անոր խցիկին մէջ կը հարցաքննէր զանիկա, գնա՛ ըսէ քու պատրիարքիդ որ վեց ամիս յետոյ իրարու պիտի հանդիպինք Յիսուսի առջև դատուելու համար. . .»: Վեց ամիսը չլրացուցած՝ վանականը իր խցիկին՝ պատրիարքը իր պալատին մէջ, միւսնոյն օրը եւ նոյնժամուն երկուքն ալ հոգիներն կ'աւանդեն (L. S. S. էջ 29-30):